## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

**«ՆՍԾՏԻԿ-ԳՀԱՊՁԲ-19/13» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի պարզաբանման մասին հայտարարության տեքստի հաստատման նիստ**

ք. Երևան

27 նոյեմբերի 2019թ. Ժամը 10:00

Մասնակցում էին՝

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ (ԳԱՊ)՝ | Հ. Արչունց |
| Գնահատող անդամներ (ԳԱ)՝ | Շ. Հարությունյան, Թ. Զաքարյան, |
| Բացող անդամներ (ԲԱ)՝ | Հ. Մելիքյան, Ա. Մխիթարյան |
| Հանձնաժողովի քարտուղար՝ | Լ.Բաղդասարյան |

««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի կարիքների համար Պատճենահանող և համակարգչային սարքավորումների պահեստամասերի և նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՆՍԾՏԻԿ-ԳՀԱՊՁԲ-19/13» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի վերաբերյալ 2019թ. նոյեմբերի 26-ին ստացվել է հարցադրում՝

Հարցադրում N 1

Հրավերով նախատեսված 17 չափաբաժնի տեխնիկական բնութագրում պատվիրատուն պարտադրում է ներկայացնել նամակ-հավաստագիր արտադրողի կողմից, որը թույլ է տալիս մատակարարին պաշտոնապես ներկրել տվյալ փոշին /տոները/ Հայաստանի Հանրապետություն: Գնումների մասին ՀՀ օրենքի ո՞ր կետով է դա ամրապնդված:

Պարզաբանում N 1

Հարգելի մասնակից(ներ), ««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի կողմից 2019թ. նոյեմբերի 25-ին հրապարակված «ՆՍԾՏԻԿ-ԳՀԱՊՁԲ-19/13» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի տեքստի 17-րդ չափաբաժնով ներկայացված *Տոներ HP 1005/1505 տպիչի քարթրիջի համար* գնման առարկայի տեխնիկական բնութագրով ներկայացվող պահանջը պետք է հասկանալ հետևյալ կերպ՝ համաձայն ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 21-րդ կետի 1)-ին ենթակետի ա) պարբերության պահանջի սահմանվում է պայմանագրի կատարման փուլում ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատի ներկայացման անհրաժեշտություն:

Գնահատող հանձնաժողովը որոշեց հաստատել «ՆՍԾՏԻԿ-ԳՀԱՊՁԲ-19/13» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի պարզաբանման մասին հայտարարության տեքստը և հրապարակել գնումների էլեկտրոնային համակարգում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

| | | |
|---|---|---|
| Հանձնաժողովի նախագահ (ԳԱՊ)՝ | _____ | Հ. Արչունց |
| Գնահատող անդամներ (ԳԱ)՝ | _____ | Շ. Հարությունյան |
| | _____ | Թ. Զաքարյան |
| Բացող անդամներ (ԲԱ)՝ | _____ | Հ. Մելիքյան |
| | _____ | Ա. Մխիթարյան |
| Հանձնաժողովի քարտուղար՝ | _____ | Լ.Բաղդասարյան |